

ԿՐՕՆԱՓՈՒՆ “ԳԱՂՏՆԻ” ՀԱՅԵՐՈՒ ՈՂԻՍԱԿԱՆԸ

Posted on May 12, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Համօ Մոսկօֆեան, Վիսպատէն - Մայնց - Մուշ - Պէյրուք հեռախօսով, Պէյրուք, 12 Մայիս 2010

“Թուրք թէ քիւրտ բռնի դարձած, զազա ու ղզլպաշ, ասորի թէ արաբ ծագումով բոլոր հայու որդիները՝ հայ են...”



Կրօնափոխ հայորդիներ

Մեծ Եղեռնի 95ամեակը յաւելեալ խրախուսանք մը եղաւ մեր բռնի “թրքացած” ու “քրտացած” եղբայրներուն եւ քոյրերուն համար ինքնաճանաչման, դէպի մայր ժողովուրդ վերադառնալուն: Անշուշտ այս շարժումը բաւական զգոյշ քայլերով կ’ընթանայ, որովհետեւ մեր ժողովուրդի թշնամիները աչալուրջ կը հետեւին իրենց գործած Յեղասպանութենէն վերապրած վկաներու նոր զարթօնքին:

Համօ Մոսկօֆեան, Վիսպատէն - Մայնց - Մուշ - Պէյրուք հեռախօսով, Պէյրուք, 12 Մայիս 2010

“Թուրք թէ քիւրտ բռնի դարձած, զազա ու ղզլպաշ, ասորի թէ արաբ ծագումով բոլոր հայու որդիները՝ հայ են...”



Կրօնափոխ հայորդիներ

Մեծ Եղեռնի 95ամեակը յաւելեալ խրախուսանք մը եղաւ մեր բռնի “թրքացած” ու “քրտացած” եղբայրներուն եւ քոյրերուն համար ինքնաճանաչման, դէպի մայր ժողովուրդ վերադառնալուն: Անշուշտ այս շարժումը բաւական զգոյշ քայլերով կ’ընթանայ, որովհետեւ մեր ժողովուրդի թշնամիները աչալուրջ կը հետեւին իրենց գործած Յեղասպանութենէն վերապրած վկաներու նոր զարթօնքին:

Այսօր անոնք կ’ապրին Պատմական Հայաստանի հողին վրայ՝ Համաշէն_Համշէնէն՝ մինչեւ Տարօն, Մուշ, Վարթօ, Սասուն ... Այստեղ դարեր շարունակ ծնած են հայ ազգի մեծամեծները՝ Վարդան եւ Մուշեղ Մամիկոնեանները, Մեսրոպ Մաշտոցը, Սասունցի Դաւիթը, թոնտրակեան շարժման ըմբօստները, հայ անմահ ֆիտայիները: Այստեղ է Մշոյ “Սուլթան” Սբ. Կարապետ վանքը՝ հայ ժողովուրդի միաբանութեան եւ հաւատքի ամրոցը:



Անոնց ժառանգները՝ Թուրքիոյ տառապած ժողովուրդներու ազգային ազատագրական շարժումներուն զինուորագրուելով՝ կարողացած են պատուով պաշտպանել ապրելու եւ գոյատեւելու իրաւունքը՝ ժողովրդավար Թուրքիա մը կառուցելու արիւնալի պայքարին

մէջ: Այդ արուեստական պետութեան բոլոր ժողովուրդները, եւ նոյնինքն թուրքերը, կը պայքարին յանուն մարդավայել աշխարհի մը ուր կը յարգուին մարդու իրաւունքները, հանդուրժողականութիւնը, միւս ազգերու դէմ կատարուած ցեղասպանութիւնները ճանչնալու եւ հատուցելու գործընթացը:

Բարեբախտաբար, միջոցներ ստեղծուած են կապուելու Պատմական Հայաստանի հողերուն վրայ ապրող “գաղտնի” հայերուն եւ անոնց ընտանիքներուն հետ: Շնորհիւ խիզախ եղբայրներ Սիմոն (Նուրետտին) Կիւնտէնի, Ալի Իսսանի (Սամուէլ Ֆելէկեանի), Մշեցի Արմէնի (Աքիֆ Հասան), Սապրի Ալքանի եւ այլոց, կարողացանք հետեւեալ լուսանկարները ձեռք բերել “Ալեուի” հայերու, “քիւրտ թէ զազա” առերես դարձած հայու բեկորներու՝ որոնք մեր բոլորին կը յիշեցնեն թէ պայքարը վերջ չէ՛ գտած:

Պատմութեան ընթացքին հայ ժողովուրդը բազմաթիւ չաստուածներ պաշտած, կրօնքներու թէ դաւանանքներու հետեւած է: Մահմետական թէ Ալեուի, զրադաշտական թէ հինտու, հայախօս թէ քրտախօս ակելի քան 1,5 միլիոնի հասնող այս “անդէմ” զանգուածը 4000 տարիէ ակելի, ինչպէս Հրանդ Տինք պիտի ըսէր՝ կ’ապրի ի՛ր հողերուն վրայ:

Ինքզինք “Հրայր Դժոխք” կոչող (ու զարմանալի նմանութեամբ հայ նահատակ ֆետայիյի...) Սիմոն Կեօնտէն՝ քանի մը օր առաջ համակարգչային գրոյցով հաղորդեց, “Թուրք թէ քիւրտ բռնի դարձած, զազա ու ղզլպաշ, ասորի թէ արաբ ծագումով բոլոր հայու որդիները՝ հայ են...”:

Սփիւռքի թէ հայրենիքի ազգային ու կուսակցական, կրօնական թէ մշակութային շրջանակները ազգային մեծ պարտք ունին ինչպէս Թուրքիոյ, այնպէս ալ “թրքական Սփիւռք”ի ծագումով հայ բոլոր ազգակիցներուն հանդէպ:

